Հավելված

Քաղաքացիական ավիացիայի

կոմիտեի նախագահի

2021 թվականի դեկտեմբերի 28-ի

N 669-Ա հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՎԻԱՑԻՈՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

I. ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԴԵՊՔԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

1. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) վերապահված գործունեության ոլորտում որոշակի ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացմամբ պայմանավորված՝ նպատակահարմար է ներգրավել պայմանագրային հիմունքներով համապատասխան փորձագետ:

2. Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը և պահանջները սահմանված են «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Չիկագոյի կոնվենցիա) N 1 հավելվածով, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԻԿԱՕ) Դոկ. 8984-ով և Դոկ. 9379-ով, ինչպես նաև Եվրոպական թռիչքային անվտանգության գործակալության (այսուհետ՝ ԵԱՍԱ) կանոնակարգերով:

II. ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3. Փորձագետին ներկայացվող պահանջներն են՝ բուժական գործ, ընդհանուր բժշկություն մասնագիտությամբ բարձրագույն բժշկական կրթություն, մասնագիտացում (կլինիկական օրդինատուրա) որևէ կլինիկական մասնագիտությամբ, ՀՀ-ում բժիշկ աշխատելու իրավասություն, ավիացիոն բժշկության հիմնական (ցանկալի է նաև խորացված) դասընթացի վկայականի առկայություն, ավիացիոն բժշկության բնագավառում հինգ տարվա աշխատանքային փորձ կամ առաջին դասի ավիաբժշկական փորձաքննության առնվազն 200 դեպքերի փորձ, քաղաքացիական ավիացիայի բնագավառում ավիացիոն մասնագետների աշխատանքային պայմանների վերաբերյալ տեղեկացվածություն, դրանից բխող առողջական վիճակի նկատմամբ պահանջների և առողջապահական ռիսկերի վերաբերյալ գիտելիքներ, մասնագիտական լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով ու ժամանակակից այլ

տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, անգլերեն լեզվի իմացություն, որը թույլ կտա կիրառել այդ լեզվով հրատարակված մասնագիտական գրականությունը:

III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

4. Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով:

IV. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

5. Փորձագետը Ծրագրի 4-րդ կետով սահմանված ժամանակահատվածում իրականացնում է Ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները.

1) Կոմիտեի ավիացիոն բժշկական փորձաքննության կարգի վերանայման աշխատանքի համակարգում՝ ներառելով նախաթռիչքային և նախահերթափոխային բժշկական զննման ընթացակարգերը:

2) Կոմիտեի կողմից ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների)՝ ավիացիոն միջազգային կազմակերպությունների պահանջներին համապատասխանության հավաստագրման կարգի վերանայման աշխատանքների համակարգում:

3) Կոմիտեի կողմից հավաստագրված ավիացիոն բժշկական կենտրոնի աշխատանքների ընթացիկ հսկողություն՝ ավիացիոն բժշկական փորձագետների կողմից իրականացվող փորձաքննության հաշվետվական ձևերի կանոնավոր ստուգումների և վերլուծության իրականացում:

4) անհրաժեշտության դեպքում ավիացիոն մասնագետների բժշկական պիտանիության վերաբերյալ անհատական որոշումների ընդունում՝ սահմանված պահանջներին ոչ լիարժեք համապատասխանության դեպքում, դեպքերի կրկնակի վարում, բժշկական սերտիֆիկատների թողարկումը մերժելու կամ սահմանափակումների կիրառումով թողարկելու որոշումների ընդունում:

5) ավիացիոն բժշկական փորձագետների հավաստագրման և, անհրաժեշտության դեպքում, վերահավաստագրման գործընթացների համակարգում:

6) անհրաժեշտության դեպքում ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների) նոր աշխատակիցների վերապատրաստում աշխատավայրում՝ ընթացակարգերի, փաստաթղթաշրջանառության պահանջների վերաբերյալ:

7) Կոմիտեի կողմից հավաստագրված ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների) տարեկան աուդիտի գործընթացի համակարգում:

8) էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի հաղորդակցության, Կոմիտեի աշխատողների, ՀՀ առողջապահության նախարարության և ենթակա կառույցների կամ միջազգային կազմակերպությունների (Միջպետական ավիացիոն կոմիտեի (այսուհետ՝ ՄԱԿ), ԻԿԱՕ-ի, ԵԱՍԱ-ի) հարցումներին պաշտոնական պատասխանների, ԻԿԱՕ-ի փաստաթղթերի, ինչպես նաև Չիկագոյի կոնվենցիայի N1 հավելվածի հետ ՀՀ

օրենսդրության տարբերությունների հայտարարագրման, հարցաշարերին պատասխանելու գործընթացի ապահովում:

9) ավիացիոն բժշկական կենտրոնի աշխատողներին ոլորտի նորությունների վերաբերյալ իրազեկում:

10) մասնակցություն COVID-19 պանդեմիայի հետ կապված հանրային առողջապահական միջոցառումների ընթացակարգերի ներդրմանը, մասնավորապես՝ հանրային առողջապահական միջանցքի հետ կապված ԻԿԱՕ-ի «iPack» փաթեթի ներդրման աշխատանքներին:

11) COVID-19 պանդեմիայի հետ կապված հանրային առողջապահական միջոցառումների հարցերի վերաբերյալ միջազգային գիտաժողովներին, վեբինարներին մասնակցության ապահովում, Կոմիտեի ավիացիոն անվտանգության վարչության մասնագետներին մասնագիտական աջակցության տրամադրում:

12) Միջազգային ավիացիոն կազմակերպությունների կամ աուդիտ անցկացրած ստորաբաժանումների կողմից արձանագրած թերությունների վերացում:

V. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6. Փորձագետը վեց ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություններ:

7. Փորձագետի կողմից կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

VI. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

8. Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ վեց ամիսը մեկ և ամփոփիչ փուլ:

9. Աշխատանքը գնահատվում է վեց ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

10. Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի 5-րդ կետի 1-12-րդ ենթակետերով սահմանված աշխատանքների արդյունքների:

11. Համապատասխանաբար վերջնարդյունքների չափանիշներն են՝

1) ավարտին են հասցվել նախաթռիչքային և նախահերթափոխային բժշկական զննման ընթացակարգերի մշակման և հաստատման գործընթացները:

2) ավարտին են հասցվել ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների)՝ ավիացիոն միջազգային կազմակերպությունների պահանջներին համապատասխանության հավաստագրման կարգի վերանայման աշխատանքները:

3) իրականացվել է Կոմիտեի կողմից հավաստագրված ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների) աշխատանքների վերահսկումը, կատարվել են ավիացիոն բժշկական փորձագետների կողմից իրականացվող փորձաքննության հաշվետվական ձևերի կանոնավոր ստուգումներ, իրականացվել են թերությունների, խախտումների հետևողական վերլուծություն:

4) ընդունվել են ավիացիոն մասնագետների բժշկական պիտանիության վերաբերյալ անհատական որոշումներ՝ սահմանված պահանջներին ոչ լիարժեք համապատասխանության դեպքում, իրականացվել է դեպքերի կրկնակի վարում, ընդունվել են որոշումներ բժշկական սերտիֆիկատների թողարկումը մերժելու կամ սահմանափակումների կիրառումով թողարկելու վերաբերյալ:

5) ըստ անհրաժեշտության, համակարգվել են ավիացիոն բժշկական փորձագետների հավաստագրման ու վերահավաստագրման գործընթացները.

6) անհրաժեշտության դեպքում ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների) նոր աշխատակիցների վերապատրաստում աշխատավայրում՝ ընթացակարգերի, փաստաթղթաշրջանառության պահանջների վերաբերյալ:

7) համակարգվել է Կոմիտեի կողմից հավաստագրված ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների) տարեկան աուդիտի գործընթացը:

8) ապահովվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի հաղորդակցությունը, Կոմիտեի աշխատողների, ՀՀ առողջապահության նախարարության և ենթակա կառույցների կամ միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի, ԻԿԱՕ-ի, ԵԱՍԱ-ի) հարցումներին պաշտոնական պատասխանները, իրականացվել է ԻԿԱՕ-ի փաստաթղթերի, ինչպես նաև Չիկագոյի կոնվենցիայի N 1 հավելվածի հետ ՀՀ օրենսդրության տարբերությունների հայտարարագրման, հարցաշարերին պատասխանելու գործընթացը:

9) ապահովվել է ավիաբժշկական փորձագետներին նորությունների վերաբերյալ իրազեկումը, ներկայացվել են առաջարկություններ Կոմիտեի նախագահին նոր ընթացակարգերի ստեղծման կամ առկա ընթացակարգերի բարելավման ուղղությամբ (առկայության դեպքում):

10) մասնակցել է COVID-19 պանդեմիայի հետ կապված հանրային առողջապահական միջոցառումների ընթացակարգերի ներդրմանը, մասնավորապես՝ հանրային առողջապահական միջանցքի հետ կապված ԻԿԱՕ-ի «iPack» փաթեթի ներդրման աշխատանքներին:

11) մասնակցել է COVID-19 պանդեմիայի հետ կապված հանրային առողջապահական միջոցառումների հարցերի վերաբերյալ միջազգային գիտաժողովներին, վեբինարներին, Կոմիտեի ավիացիոն անվտանգության վարչության մասնագետներին մասնագիտական աջակցության է տրամադրել:

12) վերացվել են միջազգային ավիացիոն կազմակերպությունների կամ աուդիտ անցկացրած ստորաբաժանումների կողմից արձանագրած թերությունները:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N1
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՎԻԱՑԻՈՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՀԵՏ

քաղ. Երևան «10» հունվարի 2022թ.

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն (այսուհետ՝ համապատասխան մարմին)՝ ի դեմս Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի գլխավոր քարտուղար Միքայել Աշոտի Զալինյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և Արմինե Արմիկի Դանիելյանը, գրանցված՝ քաղ. Երևան, Բաղյան փ., շ. 9, բն.41, նույնականացման քարտը՝ 005797915, տրված 005-ի կողմից 21.03.2017թ. (այսուհետ՝ փորձագետ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Համապատասխան մարմինը փորձագետին հանձնարարում է իրականացնել որոշակի աշխատանքներ, որոնց նկարագրությունը նշված է սույն պայմանագրի 1.3-րդ կետում և պարտավորվում է վճարել նրա կատարած աշխատանքի համար, իսկ փորձագետը պարտավորվում է կատարել հանձնարարված աշխատանքները սույն պայմանագրով սահմանված պայմաններով:

1.2. Փորձագետն անմիջականորեն ենթարկվում է Կոմիտեի նախագահին: Աշխատանքների կատարման վայրն է՝ համապատասխան մարմնի գտնվելու վայրը:

1.3. Սույն պայմանագրով փորձագետին առաջադրվող աշխատանքը ներառում է՝

1.3.1. Կոմիտեի ավիացիոն բժշկական փորձաքննության կարգի վերանայման աշխատանքի համակարգում՝ ներառելով նախաթռիչքային և նախահերթափոխային բժշկական զննման ընթացակարգերը:

1.3.2. Կոմիտեի կողմից ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների)՝ ավիացիոն միջազգային կազմակերպությունների պահանջներին համապատասխանության հավաստագրման կարգի վերանայման աշխատանքների համակարգում:

1.3.3. Կոմիտեի կողմից հավաստագրված ավիացիոն բժշկական կենտրոնի աշխատանքների ընթացիկ հսկողություն՝ ավիացիոն բժշկական փորձագետների կողմից իրականացվող փորձաքննության հաշվետվական ձևերի կանոնավոր ստուգումների և վերլուծության իրականացում:

1.3.4. անհրաժեշտության դեպքում ավիացիոն մասնագետների բժշկական պիտանիության վերաբերյալ անհատական որոշումների ընդունում՝ սահմանված պահանջներին ոչ լիարժեք համապատասխանության դեպքում, դեպքերի կրկնակի վարում, բժշկական սերտիֆիկատների թողարկումը մերժելու կամ սահմանափակումների կիրառումով թողարկելու որոշումների ընդունում:

1.3.5. ավիացիոն բժշկական փորձագետների հավաստագրման և, անհրաժեշտության դեպքում, վերահավաստագրման գործընթացների համակարգում:

1.3.6. անհրաժեշտության դեպքում ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների) նոր աշխատակիցների վերապատրաստում աշխատավայրում՝ ընթացակարգերի, փաստաթղթաշրջանառության պահանջների վերաբերյալ:

1.3.7. Կոմիտեի կողմից հավաստագրված ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների) տարեկան աուդիտի գործընթացի համակարգում:

1.3.8. էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի հաղորդակցության, Կոմիտեի աշխատողների, ՀՀ առողջապահության նախարարության և ենթակա կառույցների կամ միջազգային կազմակերպությունների (Միջպետական ավիացիոն կոմիտեի (այսուհետ՝ ՄԱԿ), ԻԿԱՕ-ի, ԵԱՍԱ-ի) հարցումներին պաշտոնական պատասխանների, ԻԿԱՕ-ի փաստաթղթերի, ինչպես նաև Չիկագոյի կոնվենցիայի N1 հավելվածի հետ ՀՀ օրենսդրության տարբերությունների հայտարարագրման, հարցաշարերին պատասխանելու գործընթացի ապահովում:

1.3.9 ավիացիոն բժշկական կենտրոնի աշխատողներին ոլորտի նորությունների վերաբերյալ իրազեկում:

1.3.10. մասնակցություն COVID-19 պանդեմիայի հետ կապված հանրային առողջապահական միջոցառումների ընթացակարգերի ներդրմանը, մասնավորապես՝ հանրային առողջապահական միջանցքի հետ կապված ԻԿԱՕ-ի «iPack» փաթեթի ներդրման աշխատանքներին:

1.3.11. COVID-19 պանդեմիայի հետ կապված հանրային առողջապահական միջոցառումների հարցերի վերաբերյալ միջազգային գիտաժողովներին, վեբինարներին մասնակցության ապահովում, Կոմիտեի ավիացիոն անվտանգության վարչության մասնագետներին մասնագիտական աջակցության տրամադրում:

1.3.12. Միջազգային ավիացիոն կազմակերպությունների կամ աուդիտ անցկացրած ստորաբաժանումների կողմից արձանագրած թերությունների վերացում:

1.4. Փորձագետի համար սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը համարվում է համատեղությամբ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Փորձագետը պարտավորվում է՝

2.1.1. Բարեխղճորեն կատարել սույն պայմանագրով ստանձնած աշխատանքները:

2.1.2. Պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:

2.1.3. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:

2.1.4. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

2.2. Փորձագետն իրավունք ունի՝

2.2.1. Սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն ստանալու վարձատրություն:

2.2.2. Պահանջելու համապատասխան մարմնից ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքը:

2.2.3. Իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2.3. Համապատասխան մարմինը պարտավորվում է՝

2.3.1. Սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն վճարել փորձագետի աշխատավարձը:

2.3.2. Սահմանված կարգով փորձագետին տրամադրել ամենամյա և նպատակային արձակուրդ:

2.3.3. Ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ:

2.3.4. Փորձագետին ծանոթացնել կազմակերպությունում գործող ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին:

2.3.5. Ժամանակին ապահովել փորձագետին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

2.3.6. Փորձագետի անձնական տվյալները մշակելիս պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջները:

2.3.7. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

2.4. Համապատասխան մարմինն իրավունք ունի՝

2.4.1. Ցանկացած պահին ստուգելու փորձագետին հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքը:

2.4.2. Փորձագետին ներգրավելու արտաժամյա աշխատանքների, որի տևողությունն իրար հաջորդող երկու օրերի ընթացքում չի կարող անցնել 4 ժամը:

2.4.3. Իրականացնելու աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԵԺԻՄԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

3.1. Փորձագետի համար սահմանվում է ոչ լրիվ աշխատաժամանակ: Աշխատանքային օրվա սկիզբը սահմանվում է ժամը 09:00, ավարտը՝ ժամը 15:00:

3.2. Փորձագետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում է ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ:

4. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար համապատասխան մարմինը փորձագետին յուրաքանչյուր ամիս վճարում է հիմնական աշխատավարձ 165 000 (հարյուր վաթսունհինգ հազար) դրամ:

4.2. Փորձագետին արտաժամյա, գիշերային, հանգստյան և ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքների ներգրավելու դեպքում վարձատրությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նվազագույն չափերով:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

5.1. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի: Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրերով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժան մասը:

5.2. Սույն պայմանագիրը լուծվում է աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կարգով և դեպքերում, ինչպես նաև առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգի խախտմամբ կնքված լինելու դեպքերում:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2023 թվականի հունվարի 10-ը:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունների չկատարման, կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համապատասխան մարմինը	Փորձագետը
գլխավոր քարտուղար Միքայել Աշոտի Զալինյան	Արմինե Արմիկի Դանիելյան
(ստորագրությունը)	(ստորագրությունը)